ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թ.-ի մայիսի 6-ից 10-ը Նյու Յորք (ԱՄՆ)
Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատար Սամվել Սահակյանի գործուղման վերաբերյալ

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ</u>
   Սամվել Սահակյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>
   Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի նախագահի պաշտոնակատար

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>
   Նյու Յորք (ԱՄՆ), 2019թ մայիսի 6-ից 10-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>
   ՄԱԿ-ի քարտուղարություն

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>
   Մասնակցություն ՄԱԿ-ի անտառային հարցերով ֆորումի 14-րդ նստաշրջանին

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>
   - ֆորումում անցկացվեցին ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի պաշտոնատար անձանց ընտրությունները,
   - հաստատվեց ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի օրակարգը,
   - քննարկվեց ՄԱԿ-ի անտառների զարգացման 2017-2030թթ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը,
   - 2017-2030թթ ռազմավարական ծրագրին համապատասխան, ելնելով սեփական երկրում ստեղծված իրավիճակներից, անդամ-երկրների կողմից ներկայացվեցին կամավոր ազգային նվիրատվությունների վերաբերյալ հայտարարություններ,
   - ամրագրվեց, որ ՄԱԿ-ի անտառների զարգացման 2017-2030թթ ռազմավարական ծրագիրը պետք է ծառայի որպես ուղեցույց անտառի հետ կապված բոլոր ծրագրերի համար, որ այն պետք է բարձրացնի փոխհամաձայնեցված գործառույթների մակարդակն ուղղված կլիմայի կարգավորմանը, անապատացման դեմ պայքարին և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը,
   - հատկապես կարևորվեցին անտառային ոլորտում վերահսկողության, գնահատման, հաշվետվությունների արժանահավատ կազմման և ներկայացման, մոնիտորինգի մեխանիզմների կատարելագործման հարցերը,

- ֆորումն առաջարկեց մասնակից երկրներին, կամավորության սկզբունքով, մինչև 2019թ-ի նոյեմբերի կեսը, հաստատված ձևաչափով, քարտուղարությանը ներկայացնել ազգային զեկույցներ, որոնք կքննարկվեն ֆորումի կողմից 2020թ-ին 15-րդ նստաշրջանի ընթացքում,
- քննարկվեց անտառների, հատկապես կայուն անտառօգտագործմանը վերաբերող, գլոբալ ցուցանիշների մշակման հարցը,
- ֆորումը հատուկ ուշադրության արժանացրեց անտառների գլոբալ քաղաքականության մեջ փոխադարձ համաձայնեցվածությանը և միջազգային մակարդակներում կայուն անտառօգտագործման միասնական ընկալմանը, ինչը կամրապնդվի նաև ՄԱԿ-ի իրավական փաստաթղթերով,
- ֆորումը կարևորեց բոլոր մակարդակներում անտառներին վերաբերող հարցերում համագործակցությունը, ակտիվացումը, գործողությունների կոորդինացումը (կլիմայի փոփոխության փարիզյան համաձայնագրի, կենսաբազմազանության կոնվենցիայի և այլնի շրջանակներում),
- ֆորումում շահագրգիռ քննարկման հարց դարձավ դեռևս 13-րդ նստաշրջանից օրակարգ մտած Չինաստանի կառավարության միջնորդությունը՝ Պեկինում ՄԱԿ-ի քարտուղարության բաժանմունք բացելու հարցը: Չինաստանի կառավարությունը պատրաստակամ է սեփական միջոցներով ամբողջությամբ հոգալ բաժանմունքի ծախսերը, միևնույն ժամանակ աջակցել և օգնել զարգացող ու անցումային փուլում գտնվող երկրներին անտառտնտեսական աշխատանքներ կատարելու գործում,
- ֆորումում քննարկվեց նաև տնտեսական և սոցիալական հարցերի վարչության բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվությունը,
- ֆորումը մայիսի 10-ին ավարտեց 14-րդ նստաշրջանի աշխատանքները: Համաձայն արարողակարգի սկսեց անտառային հարցերով ֆորումի 15-րդ նստաշրջանի առաջին նիստը:

Այցի շրջանակներում ս.թ. մայիսի 7-ին լիագումար նիստի ընդմիջմանը մասնակցել եմ «Անտառների վիճակը Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում» թեմատիկ նիստին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից: Իմ կողմից ռուսերեն լեզվով ներկայացվել է պահանջվող ձևաչափով զեկույց Հայաստանի անտառների վիճակի վերաբերյալ (կցվում է):

Մայիսի 9-ին լիագումար նիստի ընդմիջմանը «Քաղաքականության համահունչության և համակարգման ամրապնդում SDGs (Կայուն զարգացման նպատակներ) և UNSFP համար» խորագրի ներքո Նյու Յորքում ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցչի տեղակալ Սոֆյա Սիմոնյանը ներկայացրել է բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա ՀՀ անտառների վերաբերյալ պատրաստված նյութը, որից հետո ես պատասխանել եմ միջոցառման մասնակիցների ՀՀ անտառներին վերաբերող մասնագիտական հարցերին:

Մայիսի 10-ին լիագումար նիստի ժամանակ ելույթով ՀՀ զորակցությունն եմ հայտնել ՄԱԿ-ի անտառների գծով տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից որդեգրած քաղաքականությանը, ինչպես նաև նրա նոր նախաձեռնությանը՝ Չինաստանում անտառների մասով ՄԱԿ-ի քարտուղարության մասնաճյուղ բացելուն, ինչն ամբողջությամբ պետք է ֆինանսավորվի Չինաստանի կառավարության կողմից:

7. ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ընդունվեց ՄԱԿ-ի անտառային հարցերով 14-րդ ֆորումի նստաշրջանի զեկույցը,
- հաստատվեց ՄԱԿ-ի անտառային հարցերով ֆորումի 14-րդ նստաշրջանի որոշման նախագիծը՝ 15-րդ նստաշրջանը 2020թ. մայիսի 4-8-ը անցկացնելու մասին, ինչպես նաև այդ նիստի նախնական օրակարգը, որը պետք է ուղարկվի ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդ:

Բնապահպանության նախարարության
անտառային կոմիտեի
նախագահի պաշտոնակատար

Սամվել Սահակյան

14.05.2019թ